ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հայոց մէջ մօրուաց և մազի սովորութիւն։

ՏԻԳՐԱՆԱՅ դրամոց վրայ խօսած ատեն ըրած խոստմունքնիս Հայոց մօրուք և մազ թողու սովորութեանը վրայօք խօսելու՝, հիմայ կը կատարենք։ Մեր հին հարքն բնութեան հրամանին հնազանդելով ծանրութիւն չէին իմանար մազէ, ոչ միայն կանայք՝ այլ և արք կը թողուին երկայն մազ, նոյնպէս մօրուքնին կ'աճեցընէին, բոլոր հին ազգերն ալ Ասիացիք, Աֆրիկեցիք և Եւրոպիոյ վերի կողմերը երկայնամազք էին. այսպէս հին Գաղղիացիները, որ պատերազմի մէջ ալ մազերնին սփռած կը մնային, և մազոտ ըլլալը իրենց մեծ պարծանք էր, վասն զի կարճութեան նշան էր, ինչպէս ամէն ազգայ մէջ ալ սեպուած է. անոր համար աս ազգայ մէջ նախատինք էր մազերը կտրելը, իբրև գերութեան և ծառայութեան կամ վատութեան նշան, ինչպէս Յուլիոս Կեսար երբոր Գաղղիացւոց իշխանները բռնեց, պատժելու համար մազերնին կտրեց։ Այս ծառայութեան կամ նուաստութեան նշանն է որ ամէն կղերիկոս ալ կ'ընդունի խուզմամբ հերաց, և լատինացի կրօնաւորը և քահանայք քիչ կամ շատ գլուխնին կ'ածիլեն, բոլոր մօրուքը ածիլելէն զատ։ Որով ինքն իրեն կը յայտնուի թէ Եւրոպացւոց մէջ ալ նոր մտած է մազերը կարճեցընելու և մօրուքը ածիլելու սովորութիւնը. թէպէտ և հիմայ դարձեալ մազ աճեցընելու սովորութիւնը կը սկսի յաճախել, որով աս ալ կը յայտնէն թէ չէ կրթեալ ազգայ նշան մազին կարճութիւնը, հապա իրենց փոփոխամտութեան։ Եւ թէ որ հին ատենն ալ կրթուած ազգեր մազերնին կը կարճեցընէին, այսինքն բոլոր երեսնին կ'ածիլէին, ինչպէս Եգիպտացիք Յոյնք և Հռոմայեցիք, պէտք է գիտնալ որ չէ կրթութիւնը՝ հապա մեղկութիւնը պատճառ եղաւ ատ սովորութեան, որ հիմայ Եւրոպացիներս նախ մտուցին, ծնօտներնին ալ վար ինջեցընելով ածելին, որոնց հետևեցան Հռոմայեցիք և այլք, և ինչուան հիմայ արևելքի մէջ ունինք։ Բայց նոյն իսկ Յոյնք և իրենց կնոջերնին հետևողները իրենց աստուածներն և գիւցազունքը մազոտ կը նկարէին, նաև իրենց նախնեաց պատկերքն ալ մազոտ են։

Բրդ մեր ազգն ալ հնուց 'ի վեր ոչ միայն երկայնամազ էր, այլ և Գաղղիացւոց պէս նախանձոտ սիրող էր մազերուն, մեր առաջին նահապետին մէկ յատուկ նշանն ալ էր Քաջագանգուլը լլալը, երկայն և գանգրած մազերով, այսպէս Տիգրանայ մազերն ալ կը գովուին՝ և ս առաւել Ս ահակնին, որուն համար հին Հայկազանց երգը կ'ըսէր. "Բոց ունէր մօրուս" նշանակելով իր դեղին մօրուքը, թէպէտ և Հայոց աւելի հասարակ և յատուկ է սև մազը։

Հայերը, գոնէ հասարակ ժողովուրդը, մազերնին չէին ամփոփեր, հապա ինչպէս կ'երևնայ քանի մը Հռովմայեցւոց յիշատակարանաց վրայ՝ արձակ կը թողուին, նոյնպէս և պատերազմի մէջ, ինչպէս կը յիշեն լատին բանաստեղծք, մէկը Հերապանծ կամ Ս այելջահեր կ'անուանէ զանոնք, ուրիշ մ'ալ Ինուշահոտ կ'անուանէ Հայերը, անշուշտ իւղած մազերնուն անոյշ հոտուն համար։ Որուն կրնանք վկայութիւն սեպել մեր հին պատմութեանց մեջ հատուած մը որ կ'ըսէ "Լսինքն մեր նորդոսեղէն իւղովք օծանէին զգլուխս իւրեանց"։

Թէպէտ և հասարակօրէն ցրուած կը թողուին մազերը, բայց զանոնք իւղելէն ալ կ'իմացուի որ անխնամ չէին թողուր բարբարոսաց պէս, հապա մեծ խնամքով կը հոգային շակելու և ըստ աստիճանի հասակին և վիճակին պատշաճ ձև մը կամ զարդ մ'ալ տալու, և ինչպէս վարի ըսելիքներէս ալ պիտի երևնայ՝ հմայական կամ սրբազան կարծիք մ'ալ կար մազերնուն վրայ

1 Հատոր Զ. երես 275։

Ա.յս բաներուս ալ կրնան վկայել մեր լեզուին մէջ զանազան բառեր որ մազ կը նշանակեն, ինչպէս Հեր, վարս, գէս, գանգուր, ծամ, և ասոնցմով ածանցեալ գեղեցիկ բառեր և բարդութիւններ. շրջակայ ազգաց սովորութենէն ալ յայտնի է որ իշխանաւորներն մանաւոր սովորութիւն ալ ունէին մազը դարմանելու, և նախ կ'երևնայ թէ մազերնին վայելուչ բռնելու համար է որ գլխի զարդ հնարեցին, սանդրաձև զարդ մը գնելու, ինչպէս հիմայ տեղ տեղ կանայք կը դնեն. այսպէս մեր Ա.բրամ նահապետին համար կ'աւանդէ պատմութիւնը՝ թէ 'Լինոս իրեն ընծայ ղրկեց Ա արսակալ մարգարտեայ, որ էր թագ մը՝ բայց մազերը բռնելու յարմար, ուստի կ'երևնայ թէ թագն ալ կամ ասոր համար հնարած է, կամ առջի թագերը սանդրաձև և Ճառագայթաձև էին։

Սակ հասարակ ժողովուրդը՝ մազերը Ճակտին վրայէն ժողվելով՝ ծոծրակին և ուսին վրայ կը թողուր, կամ ժապաւինով մը Ճակատը կապած, կամ պզտի գտակի մը տակ մազերը զսպած։ Ա.յս կերպս յայտնի կ'երևայ Լ.փսամպուլի կռատան մէջ նկարած պատկերքին վրայ որ Ա անայ կամ Հայոց բերդ մը կը կարծուի[1]։

Հին արևելեայց մէկ սովորութիւնն ալ էր ոչ միայն գլխուն՝ այլ և մօրուքի մազերը հիւսել և կախուած խոպոպներ շինել. Ա.աբելնի և 'Լինուէի հնագոյն փորուածքներուն վրայ ալ գտնուեցաւ այս սովորութիւնս, որ Պարթևաց և Սասանեանց յիշատակարանաց վրայ ծանօթ էր առաջուց, Հայոց մէջ ալ նոյն սովորութիւնը հնուց մնած ըլլալը տարակուսելի չէ. ասանկ սովորութիւններու հնարողները արևելքի մէջ աւելի Ա՛արք էին, Հայք ալ անոնց դրակից, շատ բան անոնցմէ առած էին, ինչպէս լայն զգեստներ հագնիլը։ Ա՛ազերուն և մօրուքի խոպոպիք շինելը Ա.ըշակունեաց ատեն ալ ըլլալը խիստ յայտնի է. մեր կորսուած պատմչաց մէկէն մնացած պզտի հատուածի մը մէջ այս վկայութիւնը կ'առնումք Ա աղարշակայ վրայ՝ որ Ա.ըշակունեաց թագաւորութեան կանգնող և կարգադիրն է. "Խոպոպևորս առնէ զնոսա Ա աղարշակ", որ կը կարծեմ իշխանները կամ նախարարները։ Լենդանի վկայութիւնն ալ ունիմք Ա.շուշայ բդեշխին փորագրեալ քանդակին վրայ, որ ուրիշ հեղ ալ յիշած եմք[1], ուսկից կ'երևնայ ալ որ ինչուան Ա.ըշակունեաց թագաւորութեան վերջն ալ նոյն սովորութիւնը կար. բարձր աստիճանի իշխանազունք այս խոպոպեաց վրայ կ'աւելցընէին ուրիշ զարդ մ'ալ, այսինքն Ա՛արգարիտ խառնել, որ մեր Հայոց սիրական պաճուճանքն էր. ասոր ալ կը վկայէ հատուած մը հին պատմութեան, թէ "Ա.ըշակ նշանաւորեաց մարգարտօք զխոպոպիս թագաւորին իւրոյ"։

Ա՛իայն թէ երբոր Հայաստան Յունաց և Ալեւկիացւոց հետ վերաբերութիւն կ'ունենար՝ մազերն ալ անոր կը նմանեցընէր. բայց ոչ եթէ բոլոր ժողովուրդն ալ, այլ մեծամեծք կամ Յունաց մէջ կեցողք. այսպէս տեսանք[2] որ Օ.ահրատ թագաւորը որ նախ Ալեւկիացւոց ձեռքին տակ էր՝ անմօրուս է, այսպէս տեսանք և յիշեցինք[3] որ Բ Տիգրան ալ անմօրուս է, նոյնպէս իր որդին ալ և թոռը փոքր Տիգրանը՝ որոնց դրամներն ունինք. ասոնց պատճառն է Յունական սովորութեանց սերը, որ Տիգրան մնուց իր հօրը աշխարհակալութեանց պտուղ, և արքունիքը Ալեւկիացի թագաւորներէն աւելի քիչ գտնուեցաւ. թերևս ինքն ալ առաջ մօրուաւոր էր, բայց երբոր Ալեւկիոյ թագաւորութեանն ալ տիրեց՝ տեղւոյն սովորութիւնն աւելի պատուեց։ Ա.յսպէս Դ դարուն մէջ Ա.թէնք գացող Հայ պատանիներն ալ անմօրուս էին։ 'Լոյնպէս Պարթևք ալ որ ատեն մը քիչ էին՝ մազերնին կարճեցուցին,

1 Հատոր Բ. երես 62։

1 Հատ. Դ. երես 379։
2 Հատ. Է. երես 248։
3 Հատ. Զ. երես 275։

ասոնց համար կ'երեւնայ Պետրոս փոքր պատմչին ըսածը, թէ Պարթեւք մազոտները ամենէն անարգ մարդու տեղ կը դնէին։ Սակայն չեմ կարծեր որ այս սովորութիւնը երկար եղած ըլլայ. Տիգրանեան դարէն ետեւ նորէն մազ եւ մօրուք երկնցուցին՝ ինչպէս Աբգարեանց դրամներուն վրայ կ'երեւնայ, ինչուան Ռուբինեանց ատեն։ Մեր Հագարացւոց ատենի նախարարներն ալ, Բագրատունիքն ալ մօրուաւոր էին, ինչպէս որ ինչուան հիմայ քանի մը եկեղեցեաց մէջ արձաններ, եւ Հաղբատայ մէջ կեցած Սմբատայ եւ Գուրգէնի մօրուաւոր արձանները կը ցուցընեն։ Ռուբինեանք Եւրոպացւոց արքունեաց սովորութիւնները առնելով՝ անոնց պէս մազերնին ալ կարճեցուցեր էին. անոր համար Լամբրոնացին կը գրէր Լեւոն Թագաւորին. «Ածեցուցէք զհերս եւ զմօրուս որպէս ձեր հայրքն»։

Ոչ միայն թէ մօրուաց սովորութիւնը միշտ մնալով՝ մազերը ոչ միշտ երկայն մնացին. մօրուքը կտրիճ ցեղին զարդ տուեր է բնութիւնը, բայց երկայն մազերը միշտ կանանց մխիթարութիւն թողուած է, անոր համար բարբարոս եւ հեթանոսական բան մը սեպուած է քրիստոնէից մէջ երկայն մազը, ինչպէս Պօղոս առաքեալն ալ կը սորվեցընէ։ Իսկ մեր Առաքեալն սուրբ Լուսաւորիչ՝ որ ամէն հեթանոսական շղորդները ջնջել կը ջանար, վերուց այս Հայոց սովորութիւնն ալ, իր յաջորդներն ալ նոյն ջանքը ունեցան. եւ իր ատենն ալ որոնք որ դեռ հին ծուռ հաւատքէն չէին ուզեր բաժնուիլ՝ մէկ հեթանոսութեան նշանն ալ իրենց մազը կը պահէին, ինչպէս կը պատմէ իր ժամանակից պատմիչն Զենոբ եւ կը զգուշացընէ հաւատացեալներն։

Եւ որովհետեւ այս պատմիչս յիշեցինք, պէտք է քննել Հնդկաստանէն եկած Դեմետր եւ Գիսանէ իշխանաց եւ անոնց ցեղին վրայ ըսածն ալ, թէ մազոտ էին. ըսել է որ առանց խնամքի մազերնին կը թողուին, եւ ոչ Հայոց քրմաց պէս վայելուչ կ'ամփոփէին։ Այս զգուշութիւնս Ժ դարուն մէջ ալ հաստատուեցաւ երբոր Խոսրով եպիսկոպոսը Բ Անանիա կաթողիկոսին օրը ուրիշ մոլորութեանց եւ նորաձեւութեց հետ կ'ուզէր մազերն ալ երկընցընել, ըսելով թէ պէտք է «Հասարակաց թողուլ զգէսս եւ ոչ հատանել մինչեւ երկայնասցի եւ պատ առցէ, զի վասն այն կոչի Պատանի, եւ ապա կտրել հրամայէր, զի վասն այնորիկ կոչի ասէ Կտրիճ»։

Բայց մեր առջի քրիստոնեայ պատանիքն ալ կ'ածիլուէին, եւ միայն քիչ մը գէս կ'երկընցընէին, ինչպէս Բուզանդ կը վկայէ Դ դարուն մէջ Արտաւազդ Մամիկոնենին համար թէ «Ըստ մանկութեանն օրինի ըստ կրօնից Հայոց որպէս օրէն էր զգլուխ մանկտւոյն, սոյնպէս 'ի ժամանակին յայնմիկ գերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւազդայ եւ ցցունս էր թողեալ եւ գէսս արձակեալ»։

Այս ամենէս կ'իմանանք որ գրեթէ ամէն ատեն ազգերնուս հասարակաց սովորութիւնն է եղած մօրուք թողուլը, եւ շատ ատեն գլխուն մազն ալ երկայն թողուլ, բոլորն ալ չէ նէ՝ մաս մը, եւ բոլորովին երկայն չէ նէ՝ քիչ կտրել։ Իսկ այս բանս մեր նախնեաց սովորութիւնը ճանչնալու համար հարկ եղաւ ըսել, եւ ոչ թէ առաջարկելու մօրուք աճեցընել, զի աւելի փափաք ունիմք խելքի աճմունք տեսնելու։ Իսկ կանանց մազի սովորութեան վրայ աւելորդ սեպեցինք խօսիլ. վասն զի ինչպէս որ միշտ երկայնամազ եղած են, այսպէս ալ մազերնուն հիւսուածքին ձեւին եւ գլխու զարդից կերպերուն պէս շատափոփոխ բան չէ եղած աշխարհիս մէջ, կ'ըսէ անգղիացի հեղինակ մը։

Հ. Դ. Մ